ՏԵՂԵԿԱՆՔ

Ազգային Ժողովի Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի 8-րդ գումարման 4-րդ նստաշրջանի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

1. Կայացած նիստերի քանակ՝21, որից՝ 3 հերթական, 5 արտահերթ և ԱԺ մշտական հանձնաժողովների հետ 13 համատեղ նիստեր (ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումների):
2. Հանձնաժողովը գլխադասային է նշանակվել թվով 16 օրենքի նախագծի (2 օրենքների նախագծերի փաթեթ)՝ ընդունվել են ամբողջությամբ՝ 9, դուրս է եկել շրջանառությունից՝ 0, դեռևս չեն ընդգրկվել օրակարգում՝ 7, օրակարգում ընդգրկված՝ 0:
3. Նիստերի ընթացքում քննարկվել են՝

3.1 Ամբողջությամբ ընդունված օրենքների նախագծեր՝ թվով 9՝

1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին

   Կ-347-27.07.2022-ՖՎ-011/2ամբ. **Հեղինակ՝ ՀՀ կառավարություն**

2. «Գանձապետական համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին

   Կ-3471-27.07.2022-ՖՎ-011/2ամբ. Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

3. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին

   Կ-375-14.09.2022-ՖՎ-011/2ամբ. **Հեղինակ՝ ՀՀ կառավարություն**

4. 2022 թվականի մարտի 15-ին եւ մարտի 18-ին Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ ստորագրված «Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին

   Կ-341-18.07.2022-ՖՎ-011/0 **Հեղինակ՝ ՀՀ կառավարություն**

5. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասի
   Կ-382-03.10.2022-ՖՎ,ՏՀ,ԱՍ,ԱռՀ,ՏՏԳՇ,ՏԵ,ՊԻ,ԱՀ,ՊԱ,ԳԿ,ԵԻ,ՄԻ-011/0
   Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

6. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին

Կ-400-07.10.2022-ՖՎ-011/0 **Հեղինակ՝ ՀՀ կառավարություն**

7. Հայաստանի Հանրապետության եւ Զարգացման ֆրանսիական գործակալության միջեւ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված թիվ CAM 1016 01 վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին

Կ-457-05.12.2022-ՖՎ-011/0 **Հեղինակ՝ ՀՀ կառավարություն**

8. «Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հարկաբյուջետային կայունության եւ ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին

Կ-458-05.12.2022-ՖՎ-011/0 **Հեղինակ՝ ՀՀ կառավարություն**

9. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Կ-455-02.12.2022-ՖՎ-011/0 **Հեղինակ՝ ՀՀ կառավարություն**

3.2 Տեղեկանքներ / թվով 4 /

1. 2022 թվականի պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքի քննարկում:
2. 2022 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքի քննարկում:
3. Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը՝ 2022 թվականի երկրորդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:
4. Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը՝ 2022 թվականի երրորդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

3.3 Համատեղ նիստեր /13 նիստ/

Ըստ ԱԺ խորհրդի կողմից հաստատված ժամկետացանկի, «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական քննարկումների կազմակերպում և անցկացում մյուս մշտական հանձնաժողովների հետ համատեղ նիստերում ՝ /թվով 13 նիստ/:

3.4 Պաշտոնում ընտրելու մասին հարցեր

Համաձայն Ազգային ժողովի կանոնակարգ Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի՝

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալի թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախագահի տեղակալի տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրված **Արմեն Ռոբերտի Նուրբեկյանի** թեկնածությունը),
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի անդամի թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի անդամի տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրված **Նարեկ Հովհաննեսի Ղազարյանի** թեկնածությունը),
3. Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամի թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամի թափուր տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրված **Գագիկ Գառնիկի Բարսեղյանի** թեկնածությունը):

3.5 Հանձնաժողովի որոշումներ /թվով 1/.

Քաղաքացիների 2022-2023 թվականների ընդունելության տարեկան ժամանակացույցի հաստատում:

3.6 4-րդ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովը ունեցել է 4 ընդունելություն, թվով 5 քաղաքացիների համար: Հանձնաժողովի և նրա նախագահի հասցեով քաղաքացիներից և կազմակերպություններից ստացվել են թվով 19 դիմում – նամակներ:

3.7 Աշխատաժողովներ և աշխատանքային քննարկումներ /թվով 5/

Թվով երեք աշխատանքային քննարկումներ հանձնաժողովը կազմակերպել է ԱԺ-ում՝ «Ապահովագրական շուկայի ազատականացում», «Տարածաշրջանային կոմունիկացիաների զարգացում(ԻԻՀ)», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների 2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ

մտնելու հետ կապված թեմաներով և Բյուջետային գրասենյակի ու ՄԱԿ-ի զարգացման «Նոր Հայաստան, Ժամանակակից Խորհրդարան» ծրագրի հետ համագործակցությամբ, երկու արտագնա աշխատաժողով Ծաղկաձոր քաղաքում՝ «ՀՀ բյուջետային գործընթացը. ծրագրային, գենդերազգայուն և ԿԶՆ-ի բյուջետավորում» (14 - 16 հոկտեմբեր) և «ՀՀ Հաշվեքննիչ պալատի իրավական փաթեթի վերաբերյալ» (30.11 – 02.12) թեմաներով: